Հավելված N1
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի մարտի 06-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13»**

ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար _տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 05.03.2019 թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 07.03.2019 թ. տրամադրված պարզաբանումները.

Հարցադրում N 1՝ ինչպես են կազմվել որոշ չափաբաժինների հախահաշվային գները (կցվում է):

Պարզաբանում N 1՝ բոլոր չափաբաժինների նախահաշվային գները կազմվել են 2019 թ. փետրվարի 08-19-ը շուկայի գների ուսումնասիրության արդյունքում ստացված պատասխանների և 2018 թ. ընթացքում կնքված պայմանագրերի գների հիման վրա (կցվում է):

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աստղիկ Վիրաբյանին:

Հեռախոս՝ 010-55-06-01

Էլեկտրանային փոստ՝ procurement@ncdc.am

«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

«Մ- Բի- Ռ>>ՍՊԸ» ՍՊ Ընկերության տնօրեն Վ. Բաղդասարյանից

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

հանձնաժողովին

Պարզաբանում

ք. Երևան *05.03.2019թ*

Խնդրում ենք տալ պաշտոնական պարզաբանում «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով հրավերի հավելված N 1.1-ում որոշ տողերի և սյուների համար նշված նախահաշվային գների մասով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գները ավելի ցածր են, քան հնարավոր է ձեռք բերել տվյալ պահեստամասը և մատուցել ծառայությունը խնդրում ենք նշել նաև թե որ տեխսպասարկման կետերից եք կատարել հարցումը: Օրինակ եթե իրականացվի վազ 21214 մակնիշի մեքենայի շարժիչի վերանորոգում որը հրավերում նշված է 150 000 ՀՀ դրամ /Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները, բացի բլոկի փոխարինումից/, եթե տվյալ մեքենայի շարժիչի պահեստամասերը շուկայական գնով հետևյալն են՝

1. Շարժիչի գլխիկ – 60000
2. Ծնկաձև լիսեռ – 40000
3. Բաշխիչ լիսեռ – 15000
4. Փական 1 կոմպ – 16000
5. Մխոց 1կոմպ- 13000
6. Մխոցային օղակներ – 7000

   Նշված է միայն պահեստմասերի արժեքը՝ առանց աշխատանքի, որն արդեն իսկ գերազանցում է 150 000 ՀՀ դրամը, սակայն շարժիչի հիմնական նորոգման համար անհրաժեշտ են նաև ներքոնշյալ պահեստամասերը ևս՝

7. Հիդրոհրիչ
8. Հրիչ
9. Շղթա
10. Հանդարտիչ
11. Բաշմակ
12. Շարժաթևային և հիմնական ներդիրներ
13. Շարժաթև

14. Մխոցամատ
15. Ներդիրների հավաքածու
16. Փականի խցուկ
17. Շարժիչի առջևի և հետևի խցուկներ և այլն:

Նշվածը վերաբերում է նաև մնացած նախահաշվային գներին, խնդրում ենք պարզաբանել նաև մնացած պահեստամասերի և ծառայությունների մասով ևս:

Խնդրում ենք պարզաբանման պատասխանը ուղարկել m-bi-r@mail.ru էլեկտրոնային հասցեով:

« Մ- Բի- Ռ » ՍՊ Ընկերության տնօրեն *Վ. Բաղդասարյան*

«Մ-Բի-Ռ» «M-Bi-R» «M-Би-Р» 08417829 ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՄԱՅԻ ՄԱՐԶ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ COMPANY LIMITED MARZ GEGHARKUNIK

«Մ-Բի- Ռ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ք. Երևան 06.03.2019 թ.

Ի պատասխան Ձեր 05.03.2019 թ. պարզաբանման հարցման, հայտնում ենք, որ բոլոր չափաբաժինների նախահաշվային գները կազմվել են կազմակերպվող «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 2019 թ. փետրվարի 08-19-ը շուկայի գների ուսումնասիրության արդյունքում ստացված պատասխանների և 2018 թ. ընթացքում կնքված պայմանագրերի գների հիման վրա:

Հարցում է ուղարկվել հետևյալ կազմակերպություններին. «Նիգ-Ապարան» ՍՊԸ, «Գարանտսերվիս» ՍՊԸ, «Կարկոմ ավտո» ՍՊԸ, «Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ, «Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ, «Վ.Ն.Ս սերվ» ՍՊԸ, «Մարտունու ավտոտեխսպասարկման կայան» ՍՊԸ, «Յանեկ Հակոբյան» ԱՁ, «Ավտո Աստղ» ՍՊԸ, «Վարդան Պողոսյան» ԱՁ, «Տիգրան Թանանյան» ԱՁ:

Պատասխաններ են ստացվել հետևյալ կազմակերպություններից. «Նիգ-Ապարան» ՍՊԸ, «Տիգրան Թանանյան» ԱՁ, «Վարդան Պողոսյան» ԱՁ, «Մարտունու Ավտոտեխսպասարկման կայան» ԲԲԸ, «Հայ և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ, «Վ.Ն.Ս սերվ» ՍՊԸ, «Ավտո Աստղ» ՍՊԸ, «Յանեկ Հակոբյան» ԱՁ:

«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խառատյան